B. Die Verbindung eines Hauptsatzes bzw. zweier oder mehrerer Hauptsätze mit einem Nebensatze bzw. zweien oder mehreren Nebensätzen.

I. Unmittelbare Nebensätze, d. h. solche, die an Stelle unmittelbarer Satzbestimmungen stehn.

§ 84. Die Subjekts- und Objektssätze werden durch eine der Konjunktionen *որ*, *թէ* ‚dass‘ eingeleitet, z.B. *կարելի չէ, որ այնպէս լինի* ‚es ist nicht möglich, dass es sich so verhält‘; *ասում են, թէ ոչխարը յիմար է* ‚man sagt, das Schaf sei dumm‘.

§ 85. Bei den **Temporalsätzen** ist zu unterscheiden, ob der durch sie bezeichnete Vorgang mit dem im Hauptsatz ausgedrückten gleichzeitig stattfindet oder diesem folgt. Im ersteren Falle wird er meist durch *երբ* ‚als, wann, wenn', zuweilen auch durch das gleichbedeutende *երբոր* eingeleitet, in letzterem Falle durch *մինչև* ‚bis', z. B. *երբ դուրս գնաց, նա ինձ ասաց* ‚als er ausging, sagte er mir....'; *նա սպասեց, մինչև ես եկայ* ‚er wartete, bis ich kam'.

Anm. 1. Nebensätzen, die im Deutschen durch ‚ehe, bevor' eingeleitet werden, entspricht die Postposition *առաջ* ‚vor' mit dem Ablativ des Infinitivs, z. B. *իմ հեռանալուց առաջ նա ասաց* ‚bevor ich fortging, sagte er ....'.

Anm. 2. Nebensätzen, die einen der Verbalhandlung des Hauptsatzes vorausgehenden Vorgang bezeichnen, entspricht die Postposition *յետոյ* ‚nach' mit dem Ablativ des Infinitivs, z. B. *քո հեռանալուց յետոյ նա ասաց* ‚nachdem du fortgegangen warst, sagte er ....'.

§ 86. **Kausalsätze** werden in der Regel durch *որովհետև* ‚weil' eingeleitet, z. B. *չես կարող դուրս գնալ, որովհետև հիւանդ ես* ‚du kannst nicht ausgehn, weil du krank bist'.

§ 87. **Finalsätze** werden durch eine der Konjunktionen *որ, թէ* ‚dass, damit' eingeleitet. Das Verb steht in der Regel im Konj. Praes., auch dann, wenn das des Hauptsatzes eine vergangene Handlung bezeichnet, z. B. *ես խնդրեցի, որ ինձ համար էլ ակնոց առնի* ‚ich bat, er möge mir auch eine Brille kaufen'.

§ 88. **Konzessivsätze** werden durch *թէև, թէ-*

պէտ oder *թէպէտ և* eingeleitet. Der zugehörige Hauptsatz beginnt oft mit *բայց* ‚aber, doch‘, z. B. *թէև դու ամենից մեծ ես, բայց չես ուզում աշխատել* ‚obwohl du der grösste (älteste) bist, willst du doch nicht arbeiten‘.

§ 89. Konditionalsätze werden entweder durch *եթէ* ‚wenn‘ eingeleitet und weisen dann beim Verb meist den Konjunktiv auf, oder sie beginnen ohne Konjunktion und enthalten ein Verb im Indikativ. Dem Praesens des Nebensatzes entspricht in beiden Fällen in der Regel ein Futurum des Hauptsatzes, dem Imperfektum ein Konditionalis des Praesens, dem Plusquamperfekt ein Konditionalis des Praeteritums, z. B. *եթէ կամենաս, կը գամ* ‚wenn du es wünschest, werde ich kommen‘; *եթէ կամենայիր, կը գայի* ‚wenn du es wünschtest, würde ich kommen‘; *եթէ կամեցած լինէիր, եկած կը լինէի* ‚wenn du es gewünscht hättest, würde ich gekommen sein‘; *ուզէիր, կը գայի* ‚wenn du es wünschtest, würde ich kommen‘ u. s. w.

§ 90. Komparativsätze s. § 69.

II. Mittelbare Nebensätze.

§ 91. Die mittelbaren Nebensätze, Vertreter eines Attributs, werden durch das Relativpronomen oder eine Konjunktion eingeleitet, z. B. *ինչ հասկ, որ լիքն է, կռանում է դէպի գետին* ‚der Halm, der gefüllt ist, neigt sich zu Boden‘. *յոյս ունիմ, թէ վաղը գեղեցիկ*

եղանակ կը լինի ‚ich hoffe, dass morgen schönes Wetter sein wird‘.

DRITTES KAPITEL

Wortstellung.

§ 92. Die Wortstellung ist im allgemeinen eine derartige, dass alles Bestimmende dem zu Bestimmenden vorangeht und dabei die Bestimmung der Verbalperson der des Verbalinhalts, z.B. *այդ ճշմարիտ է* ‚das ist wahr‘; *նա մեզ ուտելիք տուեց* ‚er gab uns Speise‘.

§ 93. Eine Ausnahme von dieser Regel findet in folgenden Fällen statt:

I. immer:

1. beim Gerundiv, den Postpositionen und den Demonstrativsuffixen.
2. wenn durch die regelrechte Wortfolge ein Missverständnis entstehn würde, z. B. *գիրքը տուր հօրդ* oder *հօրդ տուր գիրքը* ‚gieb deinem Vater das Buch!‘ (*հօրդ գիրքը տուր* heisst ‚gieb deines Vaters Buch‘).
3. In den Wendungen *հայր սուրբ* ‚heiliger Vater‘ als Anrede der Wardapeten, und *Աստուած իմ* ‚mein Gott‘!

II. meist:

1. bei der Apposition, z. B. *մի կտոր միս* ‚ein Stück Fleisch‘.

Anm. 1. Bei Eigennamen wird die regelrechte Stellung meist beibehalten, z. B. Գիւլնազ տատը ,die Grossmutter Giulnas', Վռամշապուհ թագաւոր ,der König Vramschapuh'.

Anm. 2. Als ursprüngliche Apposition ist auch das fast immer nachgestellte ջան ,lieb' = pers. türk, جان ,Seele, Leben' aufzufassen; հայր ջան ,lieber Vater' entspricht dem jüdisch—deutschen ,Vater—Leben'.

2. bei dem zur Umschreibung des Praesens und Imperfekt dienenden Partizip auf -ում, wenn dem Verbalausdruck ein starkbetontes Wort vorangeht, und bei der Negativkonjugation, z. B. ի՞նչ ես ասում ,was sagst du?', ես չեմ ուզում ,ich will nicht'.
3. bei Bestimmungen, die aus mehreren Wörtern bestehn oder eine Ergänzung durch den folgenden Satz erfordern, z. B. աթոռն ունի չորս ոտ, նստատեղ և թիկունք ,der Stuhl hat vier Beine, einen Sitz und eine Lehne'; Ծոյլ աշակերտը հարցրեց ջանասէրին «դու ինչ ես անում, որ ...» ,Ein fauler Schüler fragte einen fleissigen: «Was thust du, dass ...»'.
4. bei Sätzen, die in eine direkte Rede eingeschaltet werden oder dieser unmittelbar folgen, z. B. «այս է քո ակնոցը», ասաց հայրս ,das ist deine Brille, sagte mein Vater'.
5. bei den den Anfang von Märchen und ähnlichen Erzählungen bildenden Redensarten, z.B. լինում է չի լինում, կար չկար ,es war einmal'.
6. beim Praedikatsnomen, auf das ein besonderer

Nachdruck gelegt wird, z. B. *շատ կեղտոտ է մեր խոզը* ‚unser Schwein ist sehr schmutzig‘.

7. beim Imperativ, z. B. *տուր ինձ մի բաժակ ջուր* ‚gieb mir ein Glas Wasser‘!

Anm. Die volkstümliche Redeweise scheint jedoch die regelrechte Stellung *մի բաժակ ջուր տուր* (aber ohne *ինձ*) zu bevorzugen.

III. Zuweilen: bei der Wendung *գիշեր բարի* (neben *բարի գիշեր*) ‚gute Nacht‘ und der Antwort *լոյս բարի*.



CHRESTOMATHIE

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ[1] ՍԿԻԶԲԸ[2] ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ.

(Ստեփաննոս Պալասանեան, Պատմութիւն Հայոց[3], Թիֆլիզ 1890, էջ 219—232)։

Քրիստոնէութեան սկիզբը լուսաւորութեան սկզբնաւորութիւնն եղաւ[4] Հայոց համար[5]. առաջին դպրոցները[6] Լուսաւորչի[7] աշխատութեամբ[8] հաստատուեցան[9] մեր[10] մէջ[11]։ Սակայն Ս. Գրիգորի հիմնած[12] դպրոցները ազգային կրթութեան[13] համար չէին[14] և չէին էլ կարող լինել, նախ այն պատճառով[15]՝ որ նոցա[16] մէջ մատակարարուած[17] ուսումը օտար (ասորի և յոյն) լեզուներով[18] էր[19] լինում, և երկրորդ՝ նոցա[20] գլխաւոր նպատակն էր Աւետարանի[21] քարոզիչներ[22] և եկեղեցական պաշտօնեաներ[23] պատրաստել։

Այս առաջին փորձից[24] յետոյ[25] յաջորդ վճռական քայլն[26] անելու[27] մի մեծ արգելք կար[28], այն

---

[1] § 66 Anm. 8. [2] § 74, 2. [3] § 67, II. 1. [4] § 47. [5] § 78,2. [6] § 66 Anm. 1. [7] § 66 Anm. 2 [8] § 66 Anm. 8. [9] § 34. § 16. [10] § 72. [11] § 78, 2. [12] § 33. [13] § 66 Anm. 8. [14] § 35. § 47. [15] § 66 Anm. 6. [16] § 72. [17] § 33. § 34. [18] § 66 Anm. 1 und 6. [19] § 47. [20] § 72. [21] § 66 Anm. 6. [22] § 66 Anm. 6. [23] § 66 Anm. 1 und 4. [24] § 66 Anm. 6. [25] § 78, 2. [26] § 74, 2 b. [27] § 66 Anm. 7. [28] § 48.

k'ristonea'kan gərakanu'tjan əs'kizbə jev bargava'tšumə.

step'anos palasan'jan, patmu't'jun ha:'jot's, 't'ifliz ha'zaɹ ut' har'juɹ inə'sun, edž 'jerku har'juɹ tasə'ninə 'mint'šev 'jerku har'juɹ jeresu'nerku.

k'ristoneu't'jan əskizbə lusavoru't'jan əskəzbnavoru't'junən je'γav ha:'jot's hamaɹ. aρa'džin dəprot's'nerə lusa'voɹt'ši ašxatu't'jamb hastatwe't'san meɹ medž. sa'ka:n surp' grigo'ri him'nats dəprot's'nerə azga'jin kərt'u't'jan hamaɹ t'še'in jev t'šein el ka'roγ li'nel, nax a:n pattša'ρov, voɹ 'not'sa medž matakara'rwats u'sumə otaɹ ('asori jev hu:n) lezune'rov eɹ li'num, jev jerk'rort' 'not'sa gəlxa'vor nəpa'takən eɹ aveta'rani k'arozit'š'neɹ jev jekeγet'sa'kan paštonja'neɹ patras'tel.

a:s aρa'džin 'p'ort'sit's 'heto ha'džort' vətšəρa'kan 'k'a:lən ane'lu mi mets ar'gelk' kaɹ, a:n

է[1] հայ լեզուի[2] սեպհական տառերի[3] պակասութիւնը, և ահա այս պակասը վիճակուեցաւ[4] լրացնել Մեսրոպ[5] Մաշտոցին։

Տարօն գաւառի[6] Հացիկ գիւղից[7] էր Մեսրոպ։ Փոքր հասակում Ներսէս Մեծին[8] աշակերտելով[9], ուսումնասիրեց[10] յոյն, ասորի և պարսիկ լեզուները, և ապա դիւանադպրի[11] պաշտօնով արքունիքը[12] մտաւ[13]։ Բայց շուտով հեռացաւ[14] նա արքունիքից և աշխարհից հրաժարուելով[15]՝ ճգնաւորական կեանք վարեց[16] իւր մի քանի աշակերտների հետ[17], որոնց[18] ձեռընտուութեամբը սկսաւ[19] Աւետարանը քարոզել Հայաստանի այն կողմերը, ուր դեռ քրիստոնէութիւնը արմատացած[20] չէր։ Այդ ժամանակները Ս. Գիրքը և ընդհանրապէս բոլոր ժամասացութեան գրքերը յունարէն և մանաւանդ ասորերէն լեզուով էին[21] կարդացւում[22] հայ եկեղեցիներում, և ժողովուրդը այդ օտար լեզուները չհասկանալով՝[23] անմխիթար դուրս էր գալիս[24] Աստուծոյ[25] տաճարից։ Այս անտեղութեան առաջն առնելու համար՝ Ս. Մեսրոպ իւր առաքելութեան մէջ ստիպուած էր Աստուածաշունչը նախ ասորերէն կարդալ և ապա հայերէն թարգմանել իւր ունկնդիրներին, որով[26] և գործը դժուարանում էր[27],

---

1 § 47. § 11. 2 § 66 Anm. 6. 3 § 66 Anm. 1 und 6. 4 § 34. 5 Vgl. § 56 Anm. 2 und § 71 Anm. 1. 6 „des Gaus Taron" s. Anm. 5. 7 s. Anm. 5. „aus dem Dorfe Hazik". 8 s. Anm. 2. 9 § 9 e. 10 § 16. 11 § 66 Anm. 2. 12 § 59, 6. 13 § 16. 14 § 16. 15 § 34. 16 § 16. 17 ‚mit einigen seiner Schüler'. 18 § 85, 1. 19 § 52. 20 § 33. 21 § 37. 22 § 34. § 35. 23 § 35. § 9 e. 24 § 41. 25 § 67, 1. 6. 26 § 75. 1. 27 § 15.

e haː le'zwi sep'a'kan ta'ρeri pakasu't'junə, jev a'ha aːs pa'kasə vitšakwe't'sav lərat's'nel 'mesrop mašto't'sin.

'taron ga'vaρi 'hat'sik gju'γit'sən eɹ 'mesrop. 'p'ok'əɹ hasa'kum 'nerses 'metsin ašakert'e'lov, usumnasi'ret's huːn, 'asori jev 'parsik lezu'nerə, jev 'apa divanadəp'ri pašto'nov ark'u'nik'ə mə'tav.

baːt's šu'tov heρá't'sav na ark'uni'k'it's jev aš'xarhit's herażarwe'lov tšəgnavora'kan kjank' va'ret's ir (jur) mi 'k'ani ašakert''neri het, vo'ront's dzeρəntwu't'jambə əskə-'sav aveta'ranə k'aro'zel hajas'tani aːn koγ'merə. uɹ deρ k'ristoneu't'junə armata't'sats t'šeɹ. aːd żamanak-'nerə surp' 'girk'ə jev ənt'anra'pes bo'loɹ żamasat'su't'jan gər'k'erə huna'ren jev mana'vand asore'ren lez'wov ein kart'at's'wum haː jekeγet'sine'rum, jev żoγo'vurt'ə aːd otaɹ lezu'nerə t'šəhaskana'lov, anməxi't'aɹ durs eɹ 'galis astu'tsu tatšarit's. aːs anteγu't'jan a'ρadżən aρne'lu ha-'maɹ surp' 'mesrop iɹ aρak'elu't'jan medż əstip'wats er astwatsa'šunt'šə nax asore'ren kar'dal jev a'pa haːe'ren t'argma'nel juɹ unkəndirne'rin, vorow jev 'gortsə dəżwa-ra'num eɹ,

մանաւանդ իւր աշակերտների համար։ Այս հանգա-
մանքն էր, որ Ս. Գիրքը հայերէն թարգմանելու և հե-
տեւապէս հայ լեզուի տառերը գտնելու գեղեցիկ
միտքը ներշնչեց Մեսրոպին[1]։ Իւր խորհուրդը Սահակ
Պարթեւին յայտնելով, կաթողիկոսը մի ժողով գու-
մարեց Վաղարշապատում, որի նպատակն էր հայերէն
լեզուի գրերը ստեղծելու միջոցների վրայ խորհրդակ-
ցել։ Վռամշապուհ թագաւորը, որ այս ժողովին
ներկայ էր, յայտնեց թէ Ասորիք եղած[2] ժամանակը[3]
լսել էր թէ Դանիէլ անունով ասորի եպիսկոպոսի մօտ
հայ լեզուի հին տառեր կային[4]։ Անմիջապէս մարդ
ուղարկուեցաւ ասորի եպիսկոպոսի մօտ, և յիշեալ
տառերը բերուեցան[5]։ Սահակ և Մեսրոպ աշակերտ-
ներ ժողովեցին և փորձեցին այն տառերը սովորեց-
նել նոցա։ Երկու տարի անընդհատ աշխատելուց
յետոյ, նոքա տեսան, որ այդ նշանագրերը բաւական
չեն մեր լեզուի բոլոր հնչիւնները բացատրելու. պա-
կաս էին եօթը ձայնաւորները և եօթը բաղաձայն
գրեր[6], որոնք հայերէնի յատուկ հնչիւններին էին
վերաբերում։ Ս. Մեսրոպ դիմեց Հայաստանից դուրս
այլեայլ ձեռնհաս անձանց[7] օժանդակութեանը, բայց
ոչ մի տեղից օգնութիւն չգտաւ[8]։ Իւր բոլոր ակնկա-
լութիւնների մէջ խաբուելով, Մեսրոպ ամենեւին չվհա-
տեցաւ, այլ ինքն իւր մէջ կենտրոնանալով գիշեր
ցերեկ խորհում էր իւր գիւտի վրայ, մինչեւ որ վեր-

---

[1] § 74, 2. Anm. 2. [2] § 47. [3] ‚zur Syrien Zeit‘ d. h. „zur Zeit, als er in Syrien gewesen war“, „zur Zeit seines Aufenthalts in Syrien“. [4] § 48. [5] § 40. [6] § 66 Anm 5. [7] § 67, II. 4 [8] § 35, 5.

ջապէս հասաւ բաղձանքին, պատմագրի[1] գեղեցիկ խօսքերի համեմատ՝ «երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի»։

Մեսրոպեան տառերի գիւտը մի նոր դարագլուխ է կազմում հայ ազգի տարեգրութիւնների մէջ. Նորանից սկիզբն են առնում ազգային կրթութիւնը և ազգային ճոխ դրականութիւնը, որոնց շնորհով հայերը քաղաքական կեանքի անկումից յետոյ՝ իրանց գոյութիւնը պահպանեցին իբրև առանձին ազգութիւն։ «Եթէ[2]», ասում է Նէյման գերմանացին, «հայերը բոլոր այն փոթորիկների մէջ՝ որ Ե. դարուց սկսած դղրդեցին Ասիան և մանաւանդ Հայաստանը, կարողացան իբրև մի անկախ քրիստոնեայ ազգ մնալ, պատճառը գլխաւորապէս ազգային լեզուի տառերի գիւտին տալու է, որով կարելի եղաւ սեպհական դրականութիւն ունենալ և մի առանձին հոգևոր կազմութիւն պահպանել»։

Տառերի գիւտի անմիջական արդիւնքն եղան[3] այն դպրոցները, որ Սահակ ու Մեսրոպ Վռամշապուհի ձեռնտուութեամբ բաց արին[4] Հայաստանի այլևայլ

---

[1] § 66 Anm. 2. [2] „Dass sich die Armenier unter allen Stürmen, denen seit dem fünften Jahrhundert Vorderasien und vornehmlich Armenien ausgesetzt waren, als ein selbständiges christliches Volk erhalten haben, ist vorzüglich diesem der eigentümlichen Sprache des Volkes angepassten Alphabete, wodurch eine einheimische Litteratur und eine selbständige geistige Bildung der Nation möglich gemacht wurde, zuzuschreiben". Carl Friedrich Neumann, Versuch einer Geschichte der armenischen Litteratur, Leipz. 1836, S. 35. [3] § 47. [4] § 36.

դատաններում։ Սոցա մէջ ժամանակով և նշանակու-
թեամբ առաջին տեղը բռնում է Վաղարշապատի
դպրոցը, որ մի տեսակ մայր ուսումնարան կամ ու-
սուցչանոց էր միւս դպրոցների համար։ Այստեղ
կրթուեցան Սահակի ու Մեսրոպի այն աշակերտները՝
որոնք տառերի գիւտի ժամանակ բաւական հասակ
ունէին[1], և կարող էին իրանց վարդապետներին
գործակից լինել թէ ուսուցչութեան և թէ
թարգմանութիւնների մէջ։ Այսպէս են՝ Յովսէփ Վա-
յոց Ձորից և Ղևոնդ երէց Վանանդեցին, կրօնական
պատերազմի երկու մեծ ախոյեանները, Եզնիկ Կող-
բացի, Կորիւն Սքանչելի, Յովսէփ Պաղնացի, Յովհան
Եկեղեցացի և ուրիշները, որոնք ընդհանուր անուամբ
կոչւում են առաջին աշակերտք կամ Թարգմանիչք։ Սորա
իրանց վարդապետների առաջնորդութեամբ շրջեցան
Հայաստանի այլևայլ կողմերը, ժողովեցին բազմաթիւ
«ուշեղ և քաջասուն, փափկաձայն և երկարոգի» մա-
նուկներ և նորաբաց դպրոցներում մատակարարեցին
նոցա նոյն ժամանակի կրթութիւնը։ Այս կարգի աշա-
կերտներից են Մ. Խորենացի, Մամբրէ, Դաւիթ Ան-
յաղթ, Գիւտ, Եղիշէ, Յովհան Մանդակունի, Ղազար
Փարպեցի և ուրիշ շատերը, որոնք ծանօթ են մեզ
կրտսեր Թարգմանիչք անունով։ Այս ուսումնավայրերի
կրթութեան ծրագիրը ընդհանրապէս կրօնական—աս-
տուածաբանական բնաւորութիւն ունէր[2]. Ս. Գիրքը,
եկեղեցական պաշտաման գրքերը, նշանաւոր ս. հայ-
րերի գրուածները,—սորա էին հայ պատանիների

---

[1] § 50. [2] § 50.

ուսումնասիրութեան առարկաները, որոնք անհրաժեշտ էին եկեղեցական կոչումն ընդունող անձանց[1] համար։ Այսպիսով հոգևորական դասը կրթութեամբ և բարոյական արժանաւորութիւններով ազգի յառաջադէմ մասը կազմելով, ժողովրդական լուսաւորութեան ղեկավարութիւնը իւր վրայ առաւ[2]։ Ամէն բանից աւելի քրիստոնէական սկզբունքները տարածելու և մեր հայրենիքի հոգևոր պիտոյքները լցուցանելու հոգ տանելով, բնական է որ նոքա ժողովրդի մտաւոր շարժմանը կրօնական ուղղութիւն տային, և այս ուղղութիւնը ինչպէս կրթութեան՝ այնպէս և գրականութեան վրայ տարածեց իւր հզօր ազդեցութիւնը։

Դպրոցների հաստատութեան հետ Ս. Սահակ և Մեսրոպ սկսան եկեղեցական գրքերի թարգմանութեան զբաղուիլ յոյն և ասորի լեզուներից, սկիզբ դնելով այն գրական շարժմանը՝ որ այնպիսի եռանդով շարունակեցին նոցա աշակերտները, և որի նմանը այնուհետև երբէք տեսնելու չէր Հայաստանը։ Այս գործունէութեան ամենամեծ արդիւնքն եղաւ[3] Ս. Գրքի թարգմանութիւնը, որ նոյն իսկ օտարների վկայութեամբ համարւում է «դշխոյ ամենայն թարգմանութիւններից»։ Երկու անգամ թարգմանուեցաւ Ս. Գիրքը հայերէն. նախ ասորական օրինակից թարգմանուեցան այն հատուածները՝ որ անհրաժեշտ էին եկեղեցական պաշտամունքի համար, և ապա եօթանասնից կոչուած ընտիր յոյն օրինակի վրայ սրբագրուեցան և մնացած մասերն էլ հայերէնի վերածուեցան։ Ընդ-

---

[1] § 67, II. 4. [2] § 37. [3] § 47.

համրապէս Հին Կտակարանի թարգմանութիւնը ամբողջապէս Ս. Սահակին է ընծայւում, բացի Առակաց գրքից, որ Նոր Կտակարանի հետ թարգմանեց Ս. Մեսրոպը. երկուսին էլ գործակցեցին երիցագոյն աշակերտներից ոմանք։

Ս. Գրքի հայկական թարգմանութիւնը բացի իւր կրօնական նշանակութիւնից՝ ունի դարձեալ մեծ նշանակութիւն հայ լեզուի զարգացման պատմութեան մէջ։ Յայտնի է, որ հայերէն լեզուն շատ վաղ ժամանակներից այլեայլ գաւառական բարբառների էր բաժանուած, առաւել կամ նուազ տարբերութեամբ միմեանցից, ինչպէս որ տարբերւում են արդի հայ գաւառական բարբառները, որոնք ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ հին գաւառալեզուների նորագոյն սերունդները։ Հեթանոսութեան վերջին դարերում այս գաւառալեզուներից մէկը, Այրարատեան նահանգի բարբառը, որ ինչպէս յայտնի է՝ քաղաքական և մտաւոր կեանքի կենտրոնն եղած[1] է միշտ, իշխեց միւս բարբառների վրայ։ Այս «ոստանէ» կամ «ոստանիկ» բարբառը, գործածուելով[2] իբրև խօսուն լեզու թագաւորական պալատում և նախարարների տներում, և իբրև գրաւոր լեզու քաղաքական ու կրօնական դիւաններում, հետզհետէ կոկուեցաւ ու մշակուեցաւ։ Դ. դարու սկըզբին այդ լեզուն արդէն բաւական կանոնաւորուած էր և զանազան գաղափարներ բացատրելու ընդունակ, ինչպէս որ երևում է նոյն դարու հեղինակների գրուածներից, թէև նա դեռ բոլորովին զերծ չէր

[1] § 47. [2] § 44.

արևելեան շատախօսութիւնից, մթութիւնից ու անորոշութիւնից, որ մեծ մասամբ ասորական լեզուի ազդեցութեան հետևանք էին։ Տառերի գիւտից յետոյ հայերէն լեզուն իւր պատմութեան նոր շրջանի մէջ է մտնում։ Այստեղ Ս. Գրքի և ուրիշ ինքնագիր ու թարգմանական գրուածների մէջ, հեղինակների ու թարգմանիչների կիրթ ճաշակի և մեծ հմտութեան շնորհով, լեզուն իւր կատարելութեան ամենաբարձր կէտին է հասնում. Նա կոկւում ու հարստանում է, պարզ ու ճշգրիտ, ճոխ միանգամայն և ամփոփ կերպարանք է ընդունում. և այս յատկութիւնները յոյն լեզուի ու կրթութեան արդիւնք էին, որոնք նոյն ժամանակները մուտ գտան Հայոց մէջ։

Արդէն Դ. դարում շատ հայ երիտասարդներ անձնական ուսումնասիրութիւնից յորդորուած՝ սկսել էին յաճախել Յունաց երկիրը գիտութեան աղբիւրից իրանց ծարաւը յագեցնելու համար։ Աթէնքի ճեմարանի մէջ նոյն դարում բազմաթիւ հայ ուսանողներ կային, որոնք իրանց գիտութեամբն ու բնատուր ձիրքերովը Յունաց նախանձը շարժում էին։ Նոցա մէջ նշանաւոր եղաւ մանաւանդ Պրոյերեսիոս կամ Պարոյր Հայկազն, Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու ուսուցիչը, որի հանճարի վրայ զարմացած՝ հռոմայեցիք պղնձէ արձան կանգնեցին նորան այսպիսի արձանագրութեամբ. «թագաւորների թագուհին Հռոմ՝ պերճախօսութեան թագաւորին» (Regina regum Roma regi eloquentiae)։ Հայ գիտնականութեան այս առաջին կարապետներին Ե. դարում յաջորդեցին ուրիշները։ Ս. Սահակ և Մեսրոպ տեսնելով, որ չէ կարելի

բաւականանալ այն կրթութեամբ, որ իրանց աշակերտները ստացել էին հայ դպրոցներում, ընտրեցին նոցանից քառասունի չափ յառաջադէմ և ընդունակ երիտասարդներ, մի մասը Աղէքսանդրիա և միւսը Աթէնք ու Բիւզանդիա ուղարկեցին, որպէս զի յոյն կրթութեան այդ կենտրոններում հռետորական, իմաստասիրական և պատմական գիտութիւններ ուսանին, և ապա վերադառնան արևմտեան լոյսը իրանց հայրենիքի մէջ ծաւալելու։ Մօտ եօթը տարի մնացին հայ ուսանողները Յունաց երկրում և այդ միջոցում նոքա մէկ կողմից իրանց ուսուցիչների դասախօսութիւններն էին լսում, և միւս կողմից պիտանի գրքերի թարգմանութեանն էին զբաղում, յոյն լեզուի և գիտութեան կատարեալ հմտութեամբը նոյն ժամանակի ուսումնականների մէջ համբաւաւոր, շատերից էլ գերազանց հանդիսանալով թէ մասնաւոր յարաբերութիւնների և թէ մանաւանդ հրապարակական վիճաբանութիւնների մէջ, որ այն ժամանակները շատ սովորական էին։ Իրանց ուսումնական պարապմունքները աւարտելուց յետոյ, Աղէքսանդրիայի ուսանողները, որոնց պարագլուխն էր Մ. Խորենացին, ուղևորուեցան Աթէնք իրանց ընկերների մօտ գնալու. բայց ճանապարհին ալէկոծութեան պատահելով, նաւը ձգեց նոցա Իտալիայի ափերի վրայ։ Այս առիթով Հռոմ ևս հանդիպեցան, ուր փոքր ինչ մնալուց յետոյ՝ անցան Աթէնք, առին իրանց ընկերակիցներին և Բիւզանդիայի վրայով դարձան Հայաստան հետները[1] բազմաթիւ

---

[1] ‚mit sich‘, eig. ‚ihre Mitheiten‘ (Substantiv der Praep. ‚mit, entsprechend), ‚ihr Gefolge‘. Vgl. § 66 Anm. 1. § 73, 1 b Anm.

յոյն գրքեր և հայ թարգմանութիւններ բերելով։

Սակայն իրանց սակաւամեայ պանդխտութեան միջոցին բոլորովին տակնուվրայ եղած էր Հայոց աշխարհը. Արշակունեաց թագաւորութիւնը կործանուած էր, ընտանի երկպառակութիւններ կեղեքում էին երկիրը, և պարսկական քաղաքականութիւնը պատրաստում էր նորանոր աղէտներ բերել Հայոց[1] գլխին։ Այսպիսի ալեկոծ ժամանակում ազգը չէր կարող ուսման վրայ մտածել, կամ նորեկ ուսումնականների արժանիքները գնահատել։ Նա պատրաստում էր պաշտպանուիլ մի կատաղի պատերազմում, որի մէջ թոյլ ու անօգնական քրիստոնէութիւնը բարոյական մեծ յաղթանակ պիտի տանէր խրոխտապանծ մոգութեան վրայ։ Այսպիսի դժնդակ պարագաների մէջ հայ ուսումնականներին ուրիշ ոչինչ չէր մնում անել, բայց եթէ անծանօթ տեղեր քաշուիլ հայրենիքի թշուառութիւնը ողբալու և իրանց ամբարած մտաւոր գանձերը ապագայ սերունդներին աւանդելու համար։

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ թուենք համառօտապէս քրիստոնէութեան սկզբից մինչև Արաբացոց ժամանակները ծաղկած մատենագիրների անունները և նոցա գրաւոր վաստակները։

Բանաստեղծութիւնը, որ ամենայն գրականութեան նշանաւոր ճիւղն է կազմում, հեթանոսութեան անկմամբ մեծ փոփոխութեան ենթարկուեցաւ ինչպէս նիւթի, այնպէս և ձևի կողմից։ Ազգային երգերը հին

---

1. § 67, II. 1.

կրօնի վրայ հիմնուած և նորա գաղափարներով տոգորուած լինելով, չէին կարող քրիստոնէական կրօնի խիստ պահանջումների հետ հաշտուիլ. քաջութիւնն և սէրը երգող բամբիռն ու քնարը լռեցին, նոցա տեղ սկսան[1] հնչել նոր տեսակ երգեր, որոնց նպատակն էր քրիստոնէական բարձր սկզբունքները հանդէս բերել և այդ սկզբունքների համար նահատակուող մարտիրոսներին փառաբանել։ Այսպիսով հայ հանճարի ստեղծական զօրութիւնը ամփոփուեցաւ բացառապէս կրօնական շրջանի մէջ, և արդարև արտադրեց վսեմ՝ տաղեր և հոգևոր երգեր, որոնք յայտնի են մեզանում՝ շարական, մեղեդի և գանձ անուններով։

Ս. Սահակ և Մեսրոպ եղան այս կրօնական բանաստեղծութեան առաջին հեղինակները։ Սահակ Պարթև երգեց Աւագ շաբաթի շարականները, որոնք նշանաւոր են իրանց պարզ ու յստակ լեզուով, գեղեցիկ իմաստներով և բանաստեղծական հանճարով. իսկ Մեսրոպին ընծայում՝ են Աղուհացից կամ ապաշխարութեան օրերի շարականները։ Նոցա աշակերտներից Մ. Խորենացին յօրինեց տէրունական գլխաւոր տօներին, այն է Ծննդեան, Տեառնընդառաջի և Յարութեան շարականները. և Յովհան Մանդակունի՝ Ս. Անտոնի, Դաւիթ մարգարէի և Նախավկայի շարականները։ Կոմիտաս կաթողիկոսը փակում՝ է այս շրջանի սակաւաթիւ բանաստեղծների ցանկը Հռիփսիմեանց հրաշալի շարականով, որ իւր ընտիր լեզուով, չքնաղ իմաստներով և գեղեցիկ նմանութիւններով եկեղե-

[1] § 52.

ցական բանաստեղծութեան գլխաւոր արտադրութիւն-
ներից մէկը կարող է համարուիլ։

Պատմագրութիւնը մեր հին գրականութեան
գլխաւոր տարրն է, և այս շրջանի պատմիչները իրանց
վայելուչ կարգաւորութեամբը, ընտիր լեզուովը ու
ոճովը և ճշմարտասիրութեամբը մեծ յարգանք են
վայելում։ Առաջին քրիստոնեայ պատմագիրն եղաւ
Ագաթանգեղոս Հռոմայեցին, Տրդատի «աջող քարտու-
ղարը», որ Թագաւորի հրամանով գրեց Հայոց դարձի
պատմութիւնը մանրամասն պարագաներով. գրքի մի
նշանաւոր մասը բռնում են Լուսաւորչի բերանացի
քարոզութիւնները։ Կենդանի ու աշխոյժ ոճ ունի
Ագաթանգեղոս և ընտիր՝ բայց փոքր ինչ մութ լեզու։
Նոյն դէպքերը համառօտապէս կրկնում է իւր
գրքոյկի մէջ Զենոբ Գլակ ասորին, Ս. Կարապետի
վանքի առաջին վանահայրը, աւելի մանրամասնաբար
խօսելով Տարօնի կրօնական պատերազմի և Տրդատի
Հիւսիսականաց դէմ մղած պատերազմի վրայ։ Բնա-
գիրը Ասորոց համար գրուած լինելով հաւանական
է, որ նոյն լեզուով էլ շարադրուած է, և այս հե-
ղինակը կամ մի ուրիշը հայերէն թարգմանած է։
Փաւստոս Բիւզանդացին ընդարձակ ոճով պատմում է
Տրդատի յաջորդների պատմութիւնը մինչև Հայաս-
տանի բաժանումը Պարսից և Յունաց մէջ, ինչպէս
նաև Լուսաւորչի տոհմի պատմութիւնը, առանձին
գլուխներ նուիրելով Ներսէս Մեծի գործունէութեա-
նը։ Փաւստոսի գրքի մէջ կան շատ պարագաներ, որոնք
Խորենացու պատմածների հետ ամենևին նմանութիւն
չունենալով՝ ընդհանրապէս անվաւեր են համարւում,

և այս բանից ոչ սակաւ նպաստում են հեղինակի սէրը արտաքոյ կարգի բաներ պատմելու և նորա չափազանցութիւնները (թուերի մէջ)։ Լեզուն ճոխ է և լի ընտիր բառերով ու կենդանի դարձուածներով. սակայն տեղ տեղ պատահում են կրկնութիւններ, որոնք ձանձրոյթ են պատճառում։ Կորիւն գրեց Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը, որի մէջ իւր վարդապետի կեանքի առաջին մասը զանցառութեան է տալիս, և միայն երկրորդ մասի վրայ է խօսում, երկարօրէն պատմելով նորա արդիւնաւոր գործերը։ Ագաթանգեղոսի ոճի հետ մեծ նմանութիւն ունի Կորիւնի ոճը. նոյն հայկաբան լեզուն, բայց և նոյն մութ ու խրթին դարձուածները գործ է ածում նա, որով և ստէպ իւր խօսքերը անհասկանալի են մնում։

Հայ պատմագրութեան հայրը և Ե. դարու ամենամեծ պարծանքն է Մովսէս Խորենացին, որ իւր պատմութեան բազմապատիկ թարգմանութիւններով գիտնական աշխարհին ծանօթացած և ընդհանուր յարգանքի արժանի եղած է։ Սահակ Բագրատունի ասպետի խնդիրքով գրեց Խորենացին այս ականաւոր աշխատութիւնը, երեք գրքի մէջ ամփոփելով մեր ազգի պատմութիւնը՝ սկզբից մինչև Արշակունեաց թագաւորութեան անկումը, և իւր խօսքը կնքում է մի սրտաշարժ ողբով, որ նոյն ժամանակի Հայաստանի ցաւալի վիճակի տխուր պատկերն է ներկայացնում։ Իւր ծանր աշխատութեան ընթացքում բազմաթիւ օտարական և ազգային աղբիւրների դիմած է Խորենացին, որոնց տուած տեղեկութիւնները միմեանց հետ բաղդատելով ու քննելով՝ ստոյգ ու վաւերական

հաւաքած կտորները իւր գրքի մէջ զետեղած է։ Ակիւլաս յոյն, քաղդէացի և ասորի պատմիչներ, Ս. Գիրքը, ազգային դիւանական դրուածները, ժողովրրդական երգերն ու աւանդութիւնները — ահա այն աղբիւրները, որ նպաստեցին Խորենացուն իւր աշխատութիւնը յօրինելու։ Բայց նորա պատմութեան գըլխաւոր հիմը կազմում է Մար-Աբաս Կատինան, որի գրուածը գժբաղդաբար կոռած և ուրիշ ոչ մի Հայ պատմագրի հետազօտութիւնների նիւթ եղած չլինելով, զանազան տարակոյսների առիթ տուած է արդի բանագատներին, որոնցից ոմանք մինչև իսկ Մար-Աբասի գոյութիւնը, հետևապէս և Խորենացու ճշմարտասիրութիւնը կասկածելի համարեցին։ Սակայն Հայ պատմագրի աշխատութեան մէջ փայլող անկեղծութիւնն ու անկողմնասիրութիւնը յայտնի բողոքում են այս ամբաստանութեան դէմ։ Խորենացու այս և ուրիշ արժանաւորութիւնները, նորա հակիրճ ու կորուկ ոճը և ընտիր հայկաբանութիւնը այնպիսի հեղինակութիւն տուած են նորան մեզանում, որ յետագայ Հայ պատմիչները ջանացած են նորան հետևելու։ Խորենացին ունի և մի աշխարհագրութիւն՝ Պապ և Պտղոմէոս աշխարհագիրների գրուածներից քաղուած, որի մէջ մնացած յաւելուածների պատճառով՝ ոմանք անհարազատ և հեղինակից շատ յետոյ գրուած են համարում։ Դասական գրականութեան մէջ Խորենացուն յաջորդում է մի բանաստեղծ-պատմիչ, անման Եղիշէն, որ առաջին կրօնական պատերազմի դէպքերը գրի առաւ[1] ութ ընդարձակ գլուխներով

[1] § 37.

կամ յեղանակներով, որոնք այն մեծ ողբերգութեան արարուածները կարող են համարուիլ։ Որքէք գեղեցիկ նիւթ աւելի գեղեցիկ գրչի չէ հանդիպած, և քանի որ հայ ազգը կեանք ունենայ և հայ լեզուն հնչէ, Եղիշէի ոսկեղինիկ ճառեանը միշտ նոյն սիրով և ոգևորութեամբ պիտի կարդացուի։ Երկրորդ կրօնական պատերազմը իւր արժանաւոր պատմիչը գտաւ Ղազար Փարպեցու մէջ, որ իւր Պատմութիւնը սկսելով Արշակունեաց թագաւորութեան բաժանուելուց, կրկնում է Վարդանանց ժամանակի դէպքերը, ապա անցնում է Վահան Մամիկոնեանի գործերի նկարագրութեանը՝ մինչև նորա մարզպանութիւնը, և այս է իսկապէս հեղինակի աշխատութեան ինքնուրոյն և աւելի հետաքրքրաշարժ մասը։ Նշանաւոր է նոյնպէս Փարպեցու թուղթը առ Վահան Մամիկոնեան, որի մէջ պաշտպանում է ժամանակակից աբեղաների ամբաստանութիւնների դէմ, և ցոյց է տալիս որ համանման հալածանքների ենթարկուած են եղել իրանից առաջ ուրիշ գրագէտներ նոյն տգէտ աբեղաների կողմից։

Զ-րդ ցամաք դարուց յետոյ յաջորդ Է. դարը երկու պատմիչ է ներկայացնում, որ մեր նկարագրած շրջանին են վերաբերում։ Առաջինն է Յովհան եպիսկոպոս Մամիկոնեան, որի պատմութեան գլխաւոր նիւթն են Գայլ Վահանի յաղթութիւնները Պարսից դէմ։ Ախորժելի պատմիչ է Յովհան, և իւր աշխոյժ ու պարզ լեզուն կարող է նոյն ժամանակի խօսուն լեզուի տիպարը համարուիլ. բայց նորա գրչի տակ պատմական ստոյգ դէպքերը երբեմն առասպելի կերպարանք են ընդունում։ Աւելի մեծ կարևորութիւն

ունի իբրև պատմիչ Սեբէոս Բագրատունի եպիսկոպոսը, որ Մ. Խորենացուց յետոյ առաջին անգամ փորձեց մի ամբողջական պատմութիւն գրել։ Սակայն ոմանք այս աշխատութեան առաջին երկու մասերը Սեբէոսի գործը չեն համարում, այլ ուրիշ հին անծանօթ մնացած գրքերից հանած հատուածներ, ինչպէս որ նոցա հին ու վսեմ ոճը ապացուցանում է։ Սեբէոսի բուն գործը սկսւում է Վահանի մարզպանութիւնից և պատմում է ամբողջ Զ. դարու և Է-ի սկզբի անցքերը, Հերակլ կայսեր[1] արշաւանքը Պարսից դէմ, Սասանեան թագաւորութեան կործանումը Արաբացոց ձեռքով, սոցա պատերազմները Յունաց, Պարսից և Հայոց աշխարհներում, մինչև 660 թիւը։ Ընդհանրապէս համառօտախօս և անաչառ պատմիչ է Սեբէոս, անձնական խորհրդածութիւններից աւելի իրերի և անձանց ճշգրիտ պատկերը ներկայացնելու հետամուտ. լեզուն էլ մաքուր ու կանոնաւոր է։

Վարդապետական մասը նոյնպէս մեծ տեղ է բռնում մեր հին մատենագրութեան մէջ, և այս առաջ է գալիս գրականութեան ընդհանուր բնաւորութիւնից և հեղինակների կոչումից, որ էր կրօնի և բարոյականութեան սկզբունքն արմատացնել ազգի մէջ։ Առաջին պատկառելի հեղինակը այս մասի մէջ հանդիսանում է նոյն ինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչ իւր Յաճախապատում կոչուած ճառերով, որոնց մէջ Արարչի իւր արարածների վրայ ունեցած խնամքը ցոյց տալուց յետոյ, անցնում է մարդկային պակասու-

---

[1] § 67, I. 7.

թիւնների վրայ խօսելու, և մեղմ խրատներ է տալիս ամէն աստիճանի ու հասակի մարդկանց։ Ինչպէս իր բերանացի քարոզութիւնների և բոլոր գործունէութեան մէջ, այնպէս և այստեղ Ս. Գրիգոր յանցաւորներին ոչ այնքան սպառնալիքներ է կարդում, որքան քաղցր խօսքերով յորդորում է առաքինութեան հետևող լինել։ Յաջորդ դարում Եղիշէն գրեց Միանձանց խրատը իրան սրտառուչ լեզուով ու իմաստներով. Խորենացին՝ Հռիփսիմէ կոյսի ներբողը և Վարդավառի ճառը. Նորա կրտսեր եղբայրը Մամբրէ ճառեց Ղազարոսի յարութեան և Քրիստոսի Երուսաղէմ մտնելու վրայ. իսկ Խորենացու քեռորդին՝ Դաւիթ Անյաղթը յօրինեց Խաչի գեղեցիկ ներբողը ժամանակակից աղանդաւորների դէմ։ Առանձին մտադրութեան արժանի են Յովհան Մանդակունու խրատական ճառերը, թւով քսան և ութ, ընտիր ոճով և իմաստներով գրուած։

Վարդապետական և իմաստասիրական գրուածների մէջ տեղը բռնում է Եզնիկի Եղծ աղանդոցը, որի մէջ հմուտ հեղինակը իմաստասէրների յատուկ ոճով խօսում է հեթանոսների, Պարսից, Յունաց և Մարկիոնի աղանդի դէմ, կրօնական ճշմարտութիւնները իբրև գլխաւոր զէնք բանեցնելով նոցա մոլորութիւնները հերքելու համար։ Լեզուի նկատմամբ Եզնիկը անզուգական մատենագիր է, և գուցէ միայն Եղիշէն կարողանայ համեմատուիլ նորա հետ։ Բայց բուն իմաստասէր է Դաւիթ Անյաղթը, յայտնի Արիստոտէլի գրուածների թարգմանութեամբ և Սահմանք իմաստասիրութեան ինքնագիր աշխատութեամբ, Պիտհոն

իմաստակների հետևողների դէմ գրած, որոնք ամէն բանի վրայ տարակուսում էին և մինչև իսկ մարդկութեան գոյութիւնը կասկածի տակ էին դնում։ Հին յունական փիլիսոփայութեան կատարեալ հմտութիւն է ցոյց տալիս Դաւիթ այս աշխատութեան մէջ. ափսոս միայն որ իմաստասիրական գաղափարները հայացնելու աւելի հոգ տարած չէ, որով նորա գրուածների շատ տեղերը, մանաւանդ թարգմանութիւնների մէջ, այսօր անհասկանալի են մնում։

ՓՇՈՒՐ—ԸՄ—ԽԱ՛Ց.

(Ա. Ահարոնեան, Պատկերներ, Մոսկուա 1900, էջ 263—272)։

Յունուարի մի ցուրտ, շատ ցուրտ օր էր, թքէիր, գետին չէր ընկնի։ Սպիտակ էր գետինը, սպիտակ էին տների պատերն ու կտուրները, սպիտակ էին մանաւանդ փողոցների և պարտէզների ծառերը—ձիւնի միատեսակ ճերմակ սաւանը փռուած էր ամեն տեղ, պատել էր ամեն ինչ։ Գիշերը խիստ պարզկայ էր և այժմ սառած ձիւնը անցուդարձ անողների ոտների տակ անախորժ ճռճռոց էր հանում, որից մարդու մարմինը փշաքաղւում էր։ Արև չը կար. մառախլապատ էր երկինքը. սաստիկ ցրտից յանկարծ խտացած գոլորշիները բարակ եղեամներ դարձած, խաղում էին օդի մէջ։ Աղաւնիներն

ու անհրեւս ճնճղուկներն անգամ այսօր, սովորակա-
նին հակառակ, ճիչ ու աղմուկով չէին թռչկոտում
կտրից կտուր, բակից բակ պաշար թռցնելու. նրանք
նստոտել էին այս ու այն պատի վրայ, այս ու այն
ծառի ճիւղերի վրայ լուռ, խղճուկ, կծկուած—սաս-
տիկ ցուրտը որանց էլ էր նեղել։ Ամեն մի անկիւնից,
ամեն մի բնից, ամեն մի տաքուկից, ուր որ կենդանի
շունչ կար, ծուխ էր բարձրանում, մարդիկ կռւում
էին ցրտի դէմ, ինչով և ինչպէս կարող էին տաքա-
նում էին։

Թէև արդէն առաւօտ էր, բայց X....-ի փողոց-
ները դատարկ էին և անկենդան. ով էր գժուել այս
կատաղի ցրտին գլուխ դուրս հանել տնից. հազիւ
երբեմն փողոցների այս ու այն ծայրում ստուերների
պէս երևում էին մուշտակների, եափունջիների կամ
վերարկուների մէջ կոլոլուած մարդիկ, քիթ ու պռ-
ունգը փաթաթած, եղեամով ծածկուած. սրանք
էլ, ով գիտէ, որպիսի անհրաժեշտ կարիքից ստի-
պուած էին թողել իրանց տաքուկ բնակարանները,
այն էլ ոչ թէ քայլում էին, այլ ակամայից վազում
էին համարեա հեւալով։

Այդ ժամին փողոցի հեռաւոր ծայրում յանկարծ
անսպասելի կերպով երևացին երկու փոքրիկ մանուկ-
ներ, 7 և 10 տարեկան։ Խեղճերն այնքան վատ էին,
որ ասես գերեզմանից դուրս քաշած մեռելներ լինէին.
դժուար էր առանց սոսկումի նայել դրանց վրայ.
երկուսն էլ գլխաբաց, դղդղուած մազերով, որոնց
վրայ առատօրէն թափուել էին եղեամների թերթիկ-
ներ. յօնքերի և աչքերի թերթերունքների վրայ նոյն-

պէս նստել էին եղեամներ, տալով մանուկներին մի անօրինակ, մի խղճալի տեսք։ Նրանց մարմինների մերկութիւնը հազիւ հազ ծածկուել էր ինչ որ կախկըխուած ծուէններով, անհնարին էր նոյն իսկ որոշել, թէ ինչ է նրանց հագինը կամ որն է վարտիքը, շապիկը, կամ արխալուխը։

X...–եցի չէին նրանք այլ գաղթականներ հեռու տեղից, տարաբաղդ, արեւոտ երկրից էին եկել, անհայր, անմայր, անտէր ... կատարեալ որբիկներ ... Սրի և կրակի ճարակ դարձած իրանց խեղճ հայրենիքի մասին այս փոքրիկ թշուառները շատ քիչ բան գիտէին, կամ դուցէ և շատ բան գիտէին, բայց քիչ էին պատմում. ասում էին միայն, որ այն երկրում «ղուլում կէնեն, մարդ կը մորթեն, անասուն տեղը էսլա սաղ-սաղ կը մորթեն, մեր խօրն ու մօր էլ ման մորթեցին անօրէնները», իսկ իրանք երկու թշուառները «էլլի» յետ փախան եկան և ընկան այստեղ տարագիր։

Խեղճերը գիշերները քնում են մի աստուածասիրի դոմում. այնտեղ շատ անասուններ կան, տաք է ... Առաջ փորձեցին մեծ դամէշների մսուրի մէջ քնել, բայց նրանք այս տարօրինակ մարմինները տեսնելով խրտնեցին, փնչացրին, թշուառները վախեցան և փախան մտան մի փոքրիկ, խղճուկ հորթուկի մսուրը, որը նոյնպէս նիհար էր, նոյնպէս տխուր, նոյնպէս թշուառ, որպէս երկու որբիկները. խեղճի մայրը հէնց նոր էր մեռել, նրան ծիծ տուող չը կար, ուստի կերակրում էին չոր խոտով, բայց նա դեռ ուտել չէր կարողանում, սովոր չէր, մէկ—մէկ ծիլ վերցնում էր, ծամծմում և վեր

ածում. Նա միշտ սոված էր, միշտ էլ տխուր, գունչը կախած, օրաւուր նիհարում էր ու նիհարում։

«Թշուառին թշուառն է միշտ մխիթարս». որբ Հորթուկը սիրով հիւրընկալեց որբ մանուկներին, նրանք բարեկամացան և սիրեցին իրար. և երբ գիշերները երկու որբիկները ճիտ-ճիտ արած, իրար պինդ խտտած քնում էին մսուրի մէջ, Հորթուկն էլ իր փոքրիկ գունչը դնում էր նոյն մսուրի շրթին, քնում էր, իր տաք շունչը մանուկների երեսին փչելով։ Գոհ էին մանուկները, միայն փոքրիկ որբը գիշերները շուտ-շուտ վեր էր թռչում, ճվում, ճչում, լաց լինում, ապա զարթնելով գանդատում էր մեծին, թէ գալիս են .... տանում են ... մորթում են ... գոմի խաւարի մէջ սարսափում էր դեւերից, չարքերից. եղբայրն այդ ժամանակ աւելի պինդ էր գրկում նրան, հանգստացնում էր և նրանք կրկին քնում էին։

Լաւ էր գոմը նրանց համար, շատ լաւ, տաք էր ... Առաւօտները վաղ զարթնում էին և իրանց վայելած հիւրընկալութեան փոխարէն նախ աւելում, մաքրում, չորացնում էին Հորթուկի տակը, գուրգուրում էին նրան, ապա կրում թափում էին մնացած անասունների աղբը և դուրս էին վազում փողոցներում թափառելու ... հաց հաւաքելու ... Այսպէս էին ապրում նրանք և գոհ էին. «զուլում» չը կար։

Սրանից առաջ էլ համարեա ամեն օր նրանք շրջում էին փողոցներում. տեղացիք տեսնում էին նրանց նոյն ցնցոտիների մէջ, նոյնպէս ոտաբոբիկ, նոյնպէս գլխաբաց, գզգզուած, որպէս այսօր և ոչ ոքի խիղճը չէր վրդովւում։ Դէ եղանակը տաք էր «եթիմն

էլ աներես կը լինի, հաց հաւաքելով կապրէն էլի՛», մտածում էին նրանք և խիղճը հանդստացնում. բայց այսօ՞ր .... որբերը դարձել փողոցումն են. այս լաւ չէ. անտանելի ցուրտ է. օձի ճուան էլ այս ցրտին թող դրսում չը մնայ, մեղք է, մտածում էին անցորդները ... ախր այդ ի՜նչպէս են բօբիկ, դողալով վազում և ի՜նչ կարիք կար այսօր էլ անպատճառ դուրս գալ ... Ա՛խ, աներես լակոտներ ....

Վա՜յ, վա՜յ, սրանց մտիկ տուր, սրանց, ասաց մի մուշտակաւոր պարարտ մարմին իր հետ գնացողին երկու վազող որբերի վրայ ցոյց տալով. օ՜ֆ, հոգիս մղկտաց, կրակ վառուեց գլխիս, կրա՜կ ... ի՜նչպէս են դողում, Աստուած իմ, ախր այս ցրտին ո՞ւր էին դուրս գալիս իրանց բնից ... Եւ նա ի սրտէ ցանկացաւ, որ այդ որբերն այսօր գոնէ դուրս եկած չլինէին կամ գոնէ ինքը չը տեսնէր նրանց դողդողալիս. հանաք չէ, մարդու հացը հարամ եղաւ .... Եթէ ճաշին միտս ընկնեն, դժուարութեամբ կը ճաշեմ, մտածեց նա և դէմքը կնճռեց։

Խօսակիցը հասկացաւ ընկերոջ խղճին հասած վիրաւորանքը և կամեցաւ նրան դուրս հանել այդ անախորժ վիճակից։

Է՜հ, ի զուր ես այդքան անհանգիստ լինում նրանց մասին, բարեկամ, նրանք սովոր են, կը տանեն. ա՜յ այլ բան է, Աստուած չանի, եթէ իմ և քո երեխաներին մի այդպիսի բան պատահի. գիտե՞ս, իմ Օսիկին որ եօրղանով էլ հիմա դուրս հանես՝ տեղն ու տեղը կը սառի, հաւատա կը սառի. սրանց բանն ուրիշ է, սրանք կը տանեն ....

Փաստաբանութիւնը խեղճացել էր, պարարտ մար-մինն ու խօսակցին անցան ...

Իսկ որբե՞րը ... Նրանք շարունակեցին առաջ գնալ փողոցով և ամենևին չէին էլ զարմանում, որ իրանք այս անտանելի ցրտին փողոցումն են, մինչդեռ իրանց հասակակից ոչ մի ուրիշ երեխայ չէ երևում. Նրանք մի բան միայն գիտէին, որ թէև սաստիկ ցուրտ է, թէև իրանք էլ մերկ են, ոտաբոբիկ, գլխաբաց դողդողում են, բայց և այնպէս պէտք է դռներն ընկնեն, որ հաց ճարեն, շատ են սոված, երէկ ճաշից սկսած բան չեն կերել ....

Վա՜խ, Գա՛լօ. էս ինչ ցուրտ ա եաման, ասաց փոքրիկը իր կծկուած, անզգայացած մատները կապ-տած շրթունքներին մօտեցնելով և ոտները խշխշա-ցող ձիւնի վրայ վերև ներքև անելով։

Խա՛, Մրաօ, շատ ցուրտ ա, մամուռ մարդու ջիգեար կուտայ, շուտ արի։

Ախր փադեախը (գոմ) տաք էր, շարունակեց փոքրիկը լացակումած, արցունքների խղճուկ կաթիլները կախուեցին արտևանունքներից, բայց առանց ընկնելու սառեցին։

Տաք էր, ապա որ անօթի ենք, ինչ էնինք ....

Փոքրիկը լռեց, կծեց շրթունքները, փչեց մատ-ներին քո՜ւ, քո՜ւ, քո՜ւ ...

Ահա նրանք կանգ առան մի մեծ դարպասի ա-ռաջ, որ բաց էր։ Բակի ներսում սաստիկ ցրտից կծկուած քնած էր մի մեծ գամփռ. Նա չէր նկատում մանուկներին, որոնք վախվխելով, ձեռք ձեռքի տուած, անվստահ քայլերով ներս մտան բակը և մի փոքր

առաջ գնալով տեսան ահաւոր շանը։ Մեծը կանգ առաւ, չը համարձակուելով աւելի առաջ գնալ։

Մրտօ, շունը՜ ը՜ ... կը կծի, դառնանք։

Ախր անօթի եմ, կը մսիմ. էգուց էրթանք. մրմնջաց փոքրիկը. էս տուն ճոչի, փշուր ըմ խաց ուզենք, էլ ման վազենք փադեսախ, ցուրտ ա փէտացանք ....

Նրանք մի փոքր էլ առաջացան, յուսալով անձայն, աննշշուկ անցնել շան մօտից և տանը հասնել։ Բայց ձիւնի ճռճռոցը զարթեցրեց շանը. Նա գլուխը բարձրացնելով տեսաւ երկու գզգզուած մանուկներին, մի կատաղի ոստիւն գործեց և վրաները յարձակուեց։ Վտանգն զգալով՝ խեղճ մանուկները ճչացին, իրար գրկեցին և վայրկենապէս նստեցին ձիւնի վրայ։ Այսպէս են պաշտպանւում շների յարձակումից մուրացիկ մանուկներն ու կանայք։ Ասես իրանց յաղթահարուած ցոյց տալով՝ այդ թոյլ արարածներն ուզում են գազանի սրտում գութ զարթեցնել։ Եւ արդարև, շունը կանգ առաւ, կենդանու կատաղութիւնը զսպուեց որբերի անպաշտպանութեան առաջ. Նա մի փոքր հեռու պառկեց, գլուխը թաթերի վրայ դրած, ասես հսկելով երկու թշուառների վրայ, որ չը լինի թէ մեր կենան փախչեն։ Սրտաճմլիկ, արտասուելի տեսարան էր. երկու ոտաբոբիկ գլխաբաց, ցնցոտիների մէջ դողդողացող մանուկներ, կապտած շրթունքներով, ուռած ձեռներով իրար կպած, կծկուել նստել էին ձիւնի վրայ և լալիս էին. եղեամի թերթիկները խաղում էին ցուրտ օդի մէջ և պտտուելով թափւում էին նրանց գզգզուած մազերի վրայ։ Կատաղած շունը

չնթրիկել էր նրանց կողքին մռմռալով, կարծես սպասում էր, որ թշուառները վեր կենան թէ չէ, վրայ պրծնի, կտոր կտոր անի։ Բակում ոչ ոք չկար։ Մանուկները շարունակում էին յուսահատ լալ ու ճչալ. սարսափած աչքերով նրանք նայում էին մէկ շանը, մէկ էլ տան դռանը, այնտեղից օգնութեան սպասելով։ Ահա վերջապէս տան դուռը ճռռալով բացուեց և շէմքի վրայ երևաց մի կին։

«Փշուր-ըմ խմց», պոռացին մանուկները միասին դողդոջուն ձայնով։

Աներես լակոտներ, ասում էի սրանք կը լինին, մրթմրթաց նա և ներս մտնելով բերեց մի կտոր հաց, տուեց սարսափած մանուկներին, իսկ ինքը յետ դարձաւ։

Մանուկները խլեցին հացի պատառը և մինչ պատրաստւում էին շտապով դուրս թռչել դռնից, շունը վեր թռաւ նրանց յետևից, վրայ պրծաւ, փոքրիկ որբի ոտքից բռնեց, քաշեց կատաղի հռմոցով։ Սարսափած մանուկը ճչաց և երեսի վրայ ընկաւ հացը ձեռքին, մինչդեռ մեծը շշկլուած՝ չը գիտենալով օգնութեան վազել թէ փախչել, կանգնած մնաց ու լաց էր լինում։ Տանտիկինը վազեց, հալածեց կատաղած շանը և երբ ձեռքից բռնելով վեր կացրեց որբիկին, երեխան ծանր տնքաց. գազանի սուր ժանիքները պատռել էին նրա փոքրիկ ոտքը, կաթկաթ արիւնը ծորում էր վէրքից և թափւում ձիւնի վրայ։ Երեխան ձեռք տուեց ոտքին, ձեռքը ներկուեց արիւնով, նա զարհուրած յետ քաշեց ձեռքը, նայեց ափին, նայեց վիրաւոր ոտքին և էլ աւելի բարձր ձայնով լաց սկսեց։

Այնու ամենայնիւ նա կռացաւ, վերցրեց հացի պատառը և կաղալով ու տնքալով հետևեց իր եղբօրը։ Արիւնը շարունակում էր կաթել նրա ոտքից և երկուսով էլ լալիս էին, տեսնելով կարմիր կաթիլները ... Բայց և այնպէս քաղցած, դողդողացող մանուկները կիսեցին հացի արիւնոտ պատառը և մի մի կտոր կրծելով առաջ գնացին։

Դեռ երբէ՛ք հացի մի պատառն այնքան թանգ չէր գնուել ....

GLOSSAR.

ա.

ա՛ (dial.) = է s. լինել.
աբասի, աբաս 20 Kopeken.
աբբայ Abt.
աբեղայ Mönch.
Ագաթանգեղոս, nom. propr., Agathangelos.
ագահ habgierig.
ագռաւ Rabe.
ազատ frei.
ազգ Stamm, Geschlecht, Volk, Familienname.
ազգագիր Ethnograph.
ազգագրական ethnographisch.
ազգագրութիւն Ethnographie.
ազգական verwandt.
ազգային national, einheimisch.
ազգութիւն Volkstum, Nationalität.
ազդեցութիւն Einfluss.
Աթէնք, nom. propr., Athen.
աթոռ Stuhl, Thron.
ալեկոծութիւն Wallung, Wogen, Sturm (auf dem Wasser).
ալիւր Mehl.
ախ ach!
ախոյեան Gegner, Streiter, Nebenbuhler.
ախորժ, ախորժելի angenehm.
ախր ach! doch.
ածել werfen, legen, spielen (Klavier, Fföte, Harfe).—ձու ածել ein Ei legen; գործ ածել anwenden, gebrauchen; վէր ածել ausgiessen (aus dem Munde) zurückgeben, erbrechen; ջութակ ածել Violine spielen.
ակամայ unwillkürlich.
ականաւոր angesehn, ausgezeichnet, vorzüglich.
ակնկալութիւն Erwartung, Hoffnung.
ակնոց Brille.
ահա sieh!, sieh da!, franz. voilà, it. ecco, russ. вотъ.
ահաւոր schrecklich.
աղանդ Sekte. - aarm. Gen. Dat. Plur. - աղանդոց.
աղանդաւոր Sektierer.
աղբ Mist, Dünger.
աղբիւր Quelle.
աղէտ Missgeschick, Unglück.
Աղէքսանդրիա, nom. propr., Alexandria.
աղմկալի lärmend, unruhig.
աղմուկ Lärm.
աղուհացք Fastenzeit.—aarm.

Gen. Dat. Plur. **աղուհացից.**

աղջիկ Mädchen, Tochter. Vgl. § 67, I 6 u. II 3.

աման Gefäss.

ամառ Sommer. Vgl. § 67, I. 3.

ամբաստանութիւն Verleumdung, Beschuldigung.

ամբարել aufspeichern.

ամբողջ ganz, vollständig.

ամբողջական vollständig.

ամբողջապէս vollständig (adv).

ամբողջութիւն Vollständigkeit.

ամեն jeder (subst.). vgl. **ամենայն** und **ամենք.** § 77, 4.

ամենա-aller-, z.B. **ամենաբարձր** allerhöchst, **ամենամեծ** allergrösst.

ամենայն jeder (adj.). Vgl. **ամեն** u. **ամենք.**

ամենայնիւ s. **այնու.**

ամենեւին ganz und gar, durchaus, völlig.

ամենք alle (subst.). Vgl. **ամեն** u. **ամենայն.**

ամիս Monat. Vgl. § 67, I. 3.

ամուսին Gemahl, Gemahlin. Vgl. § 67, I. 5.

ամփոփ kurz zusammengefasst, einheitlich.

ամփոփել beschränken auf, konzentrieren auf, bringen in, zusammenfassen.

այ he!, ai!, ach!.

այդ Dem.—Pron., s. § 74.

այդպիսի solcher. Vgl. § 77, 4.

այդքան so sehr, soviel.

այժմ jetzt. Vgl. § 67, I. 3 Anm.

այլ anderer.

այլ sondern.

այլեւայլ verschieden, mancherlei.

այն Dem.—Pron., s. § 74.— **այն է** das heisst, nämlich. Vgl. **այսինքն.**

այնուամենայնիւ trotz alledem.

այնուհետեւ von da an, seitdem, darauf.

այնպիսի solcher. Vgl. § 77, 4.

այնտեղ dort.

այնքան so sehr.

այս, Dem.—Pron., s. § 74.

այսինքն das heisst, nämlich. Vgl. **այն է.**

այսպէս auf diese Weise, so. Vgl. **այսպիսով.**

այսպիսի solcher. Vgl. § 77, 4.

այսպիսով so. Vgl. **այսպէս.**

այստեղ hier, hierher.

այսքան soviel.

այսօր heute.

անախորժ unangenehm.

Անահիտ, nom. propr., Anahit.

անաչառ unparteiisch.

անասուն Tier. Vgl. **կենդանի.**

անգամ Mal. Vgl. 67, I. 3. sogar.

անել machen. Vgl. § 36.—**Աստուած չանի** Gott verhüte!,

վերև ներքև անել auf und ab laufen, **անցուդարձ անել**, auf und ab gehn, vorübergehen, **դուրս անել** hinauswerfen, schmeissen.

աներ Schwiegervater. Vgl. § 67, I. 2.

աներես unverschämt.

անզգայացած empfindungslos.

անզուգական unvergleichlich.

անընդհատ ununterbrochen.

անծանօթ unbekannt.

անկախ unabhängig.

անկեղծութիւն Aufrichtigkeit, Unverfälschtheit.

անկենդան unbelebt.

անկիւն Ecke, Winkel.

անկողմնապահութիւն Unparteilichkeit.

անկում Fall, Sturz, Untergang.

անհայր vaterlos.

անհանգիստ unruhig.

անհասկանալի unverständlich.

անհարազատ illegitim, unecht.

անհնարին unmöglich.

անհրաժեշտ unentbehrlich, unumgänglich, unvermeidlich.

անձ Person. Vgl. § 67, II. 4.

անձայն lautlos.

անձնական persönlich.

անմահ unsterblich.

անմայր mutterlos.

անմիջական unmittelbar.

անմիջապէս unverzüglich, sofort.

անմխիթար ungetröstet, ohne Erbauung.

անյաղթ unbesiegt.

անշշուկ geräuschlos.

անորոշութիւն Unbestimmtheit, Undeutlichkeit Unklarheit.

անուն Name. Ngl. § 67, I. 4.

անպաշտպանութիւն Schutzlosigkeit.

անպատճառ unabänderlich, unbedingt.

անսուչ, dial., (= **ան-սուչ. սուչ** türk. Schuld, Sünde) schuldlos. **անսուչ տեղը** = **անմեղ տեղը** ungerechter Weise, ohne Grund.

անսպասելի unerwartet.

անվաւեր nicht thatsächlich, unglaubwürdig.

անվստահ unsicher.

անտանելի unerträglich.

անտեղութիւն Missstand, Übelstand.

անտէր ohne Herr, ohne Beschützer, heimatlos.

Անտօն nom. propr., Antonius.

անց-նել vorübergehn, übergehn, umziehn.

անցորդ Vorübergehender, Wanderer.

անցուդարձ Verkehr.—auf und

ab, auf und nieder. vgl. անել·

անցք Ereignis, Vorfall.

անօգնական hülflos.

անօթի ohne Speise, nüchtern.

անօրէն Unmensch. Übelthäter, gesetzlos.

անօրինակ ungewöhnlich. beispiellos.

աշակերտ Schüler, Jünger.— aarm. Plur. աշակերտք.

աշակերտել Schüler sein. Jünger sein.

աշակերտուհի Schülerin.

աշխատել arbeiten.

աշխատութիւն Arbeit, Mühe, Wirksamkeit.

աշխարհ Land. Welt.

աշխարհաբառ Umgangssprache. Vgl. գրաբառ.

աշխարհագիր Geograph.

աշխարհագրութիւն Geographie.

աշխոյժ lebendig, lebhaft.

Աշոտ, nom. propr., Aschot.

աչաց s. աչք.

աչք Auge.—aarm. Gen. Dat. Plur. աչաց.

ապա daraufhin, dann, nunmehr.

ապագայ zukünftig.

ապակի Glas, Glasscheibe. Vgl. բաժակ.

ապաշխարութիւն Busse.

ապացուցանել beweisen, darthun.

ապրել leben, wohnen.

աջ recht, rechte Hand.

աջող gelungen, geschickt.

առ (aarm.) an.

առա—u. s. w. s. առնել.

առակ Gleichnis. — առակաց գիրք liber proverbiorum, Sprüche Salomos.

առանձին besonder, besonders.

առանց ohne. Vgl. § 78, Anm. 1.

առաջ zuerst, vor, vorwärts. Vgl. § 78, 2. առաջն առնել vorbeugen (einer Sache), beseitigen. առաջ գալ hervorgehen.

առաջանալ vorangehn.

առաջին erster.

առաջնորդութիւն Führung.

առասպել Mythus, Sage.

առատօրէն reichlich, reich an, freigebig.

առարկայ Gegenstand.

առաւել mehr.—առաւել կամ նուազ mehr oder weniger.

առաւօտ Morgen. Vgl. § 67, 1. 3. Anm.

առաքելութիւն Mission. Sendung.

առաքինութիւն Tugend.

առիթ Veranlassung, Vorwand. Gelegenheit.

առնել nehmen, kaufen, mitnehmen. Vgl. § 37, առաջ, գիր, կանգ.

առողջ gesund.
ասել sagen. Vgl. § 38.
Ասիա Asien.
ասորական syrisch.
ասորերէն syrisch.
ասորի syrisch, Syrer, 67. II 2. c.
Ասորիք Syrien.
ասպետ Ritter.
աստիճան Grad, Rang, Stufe.
աստղ Stern.
Աստուած Gott. Vgl. § 66 Anm. 7 u. § 67, I. b.
աստուածաշունչ Bibel.
աստուածասէր gottesfürchtig. gottergeben.
ար—etc. Vgl. **անել**, u. **գալ**.
Արաբացի Araber.
արարած Geschöpf.
Արարատ Ararat.
արարատեան zum Ararat gehörig.
արարիչ Schöpfer.
արարուած Handlung, Akt (eines Schauspiels).
արգելք Hindernis.
արդէն schon.
արդարև in Wahrheit, in der That.
արդի gegenwärtig, jetzig, heutig.
արդիւնաւոր einträglich, fruchtbringend.
արդիւնք Gewinn, Frucht (übertr.)
արև Sonne.
արևելեան östlich, morgenländisch.
արևելցի Orientale.
արևմտեան westlich, abendländisch.
արժան billig, wert. würdig. Vgl. **արժանի**.
արժանաւոր würdig.
արժանաւորութիւն Verdienst, Würde.
արժանի würdig, wert. Vgl. **արժան**.
արժանիք Wert, Würde, Verdienst.
Արիստոտէլ Aristoteles.
արիւն Blut.
արիւնոտ blutig, blutbefleckt.
արխալուխ (tatarischer) Rock.
արծաթ Silber. Vgl. § 66. Anm. 3 b.
արծիւ Adler.
արձան Statue, Denkmal.
արձանագրութիւն Aufschrift, Inschrift.
արմատանալ einwurzeln, s. festsetzen.
արմատա-ցնել einpflanzen, befestigen.
Արշակունի nom. propr. Arschakunier.
արշաւանք Feldzug.
արտադրել hervorbringen.

արտադրութիւն Erzeugnis.
արտասուելի beweinenswert, zum Weinen, kläglich.
արտաքոյ äusser, äusserlich.
արտեւանունք Augenwimper.
արցունք Thräne.
արքունի dem König gehörig.
արքունիք Königshof, Palast.
-ացի Suffix zur Bezeichnung lokaler Abstammung od. Zugehörigkeit. Vgl. **-եցի.**
աւագ gross.—**աւագ շաբաթ** Karwoche, Sonnabend vor Ostern.
աւազակ Räuber.
